Մարդու իրավունքների այգի

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը դեռեւս 2011 թ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կամավոր Քեթլին Լեսթինայի (ԱՄՆ խաղաղության կորպուսի համայնքային զարգացման ոլորտի կամավոր) հետ միասին նախաձեռնեց Մարդու իրավունքների այգու հիմնադրման աշխատանքները:

Տարոն IV թաղամասի նախապատմությունը

1988 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով բազմաթիվ մարդիկ Վանաձորում և Հայաստանում կորցրեցին իրենց բնակարանները:

Մի շարք երկրներ աջակցություն առաջարկեցին ու Վանաձորին հարակից չբնակեցված վայրում՝ Տարոն IV թաղամասում, նախաձեռնեցին նոր բնակարանների, դպրոցների ու պոլիկլինիկաների կառուցումը: Ցավոք սրտի, շենքերի կառուցման ծրագրերը ոչ միշտ էին ավարտին հասցվում: Ժամանակի ընթացքում Տարոն IV թաղամասը (բնակչությունը 7,756) Վանաձոր քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անուշադրության է մատնվել: Տարոն IV թաղամասում նկատվում է գործազրկության բավականին բարձր ցուցանիշ: Բնակիչները աշխատելու մեծ ցանկություն ունեն, սակայն նրանց անհրաժեշտ է մասնագիտական վերապատրաստում,

կարիք ունեն ուղղորդման, ինչպես նաև կատարելագործված հմտությունների, որոնց շնորհիվ նրանք աշխատաշուկայի համար ավելի մրցունակ կլինեն:

Մարդու իրավունքների այգի ծրագրի նպատակներն են՝

- Ապահովել անվտանգ և բացօթյա մի միջավայր, որը հասանելի կլինի բոլոր սերունդերի ներկայացուցիչներին տարվա բոլոր եղանակներին, այն կխրախուսի ու կնպաստի ազատ ժամանցի ու առողջ ապրելակերպի կազմակերպմանը:
- Մարդու իրավունքների այգու միջոցով ապահովել ժողովրդավարության, հանդուրժողականության, այլախոհության և մարդու իրավունքների հիմնարար արժեքների վերաբերյալ համայնքի անդամների իրազեկվածությունը:
- Հայաստանում նման այլ այգիների կառուցման համար ապահովել նախատիպ՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող են համայնքը և քաղաքացիական խմբերը իրենց ձայնն ունենալ հանրային վայրի նախագծման և օգտագործման գործում:

Ինչ ենք իրականացրել մինչև այսօր

2011 թվականի սկզբին իրականացված կարիքի գնահատման արդյունքում պարզվեց, որ Տարոն IV թաղամասը չունի բացօթյա տարածք, որը թաղամասի երեխաներին ու մեծահասակներին կարող է ապահովել հանգիստն ու ժամանցն անցկացնելու վայրով: Ծնողները զրկված են իրենց երեխաների հետ անվտանգ զբոսնելու, նրանց շրջակա միջավայրի վերաբերյալ կրթելու հնարավորությունից:

Բացի այդ, Տարոն IV թաղամասի բնակիչները անհրաժեշտ են համարում ունենալ համայնքային այգի՝ մասնավորապես Մարդու իրավունքների այգի, որտեղ բոլոր տարիքային խմբերի մարդիկ կարող են հավաքվել ու մասնակցել իրենց համայնքի կառուցման որոշումներին, կիրառել մարդու իրավունքների հիմնարար արժեքները, ինչպես օրինակ՝ հավաքների ու խոսքի ազատության իրավունքը:

Տարոն IV թաղամասի բնակիչներին այգու հիմնադրման աշխատանքներում ներգրավելու համար, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում Ամերիկայի ճարտարապետների ինստիտուտի Ֆուլբրայթ կրթաթոշակ ստացած շրջանավարտ Ջեյն Բրիտ Գրինվուդը և ԱՄՆ խաղաղության կորպուսի համայնքային զարգացման ոլորտի կամավոր Քեթլին Լեսթինան

մի շարք հանդիպումներ են անցկացրել *Տարոն IV թաղամասի բնակիչների, թաղապետարանի աշխատակիցների հետ մեկտեղ:* Համայնքի անդամները միավորվել են ու մեծ ցանկություն ունեն իրականացնելու այգու կառուցման աշխատանքները: Սակայն նրանք հատկապես մասնագիտացված խմբերի աջակցության կարիք ունեն ՝ շնորհված ավելի կոնկրետ ու մասնագիտացված հմտություններով:

Կարիքի գնահատման արդյունքների հիման վրա կազմվել է Մարդու իրավունքների այգու նախագիծ կամավոր հիմունքներով ընդգրկված ճարտարապետների կողմից:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը թաղամասի դպրոցի աշակերտների համար նախաձեռնել է մարդու իրավունքների վերաբերյալ կրթական սեմինարներ: Սխեմատիկ նախագիծը ներկայացվել և ընդունվել է համայնքի բնակիչների կողմից: Հանդիպում ենք ունեցել Երևանի «Սիրահարների այգու» նախագծի ճարտարապետ Սարհատ Պետրոսյանի հետ և քննարկել Մարդու իրավունքների այգու նախագծման, աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացը:

2011 թվականի մայիսի 7-ին Տարոն IV թաղամասում իրականացվել է ծառատունկ եւ տնկվել են ավելի քան 40 ծառ և աղբահանվել է այգու տարածքը թաղամասի երեխաների աջակցությամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարը Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամասում գտնվող տարածքը «Մարդու իրավունքների այգի» հիմնադրելու նպատակով կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու հարցով 2012 թ-ին դիմել էր Վանաձորի քաղաքապետին: Վանաձորի քաղաքապետը, հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու[1] 2012 թ. հունիսի 29-ի թիվ 31-Ա որոշումը, որոշել է տվյալ տարածքը տրամադրել կազմակերպությանը: Բացի այդ քաղաքապետարանի

[1] http://hcav.am/events/%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A1%D5%B5%D5%A3%D5%B8%D6%82-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A8-%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A1/

ճարտարապետական բաժինն աջակցել է այգու խաղահրապարակի տարածքի չափագրման աշխատանքներին:

Ծրագրի նախագիծը ներկայացրել ենք մի շարք ընկերությունների եւ

կազմակերպությունների եւ 2015 թ-ին «Փարոս» հիմնադրամը[2] իրականացրեց ֆոնդահայթայթում եւ նախաձեռնեց այգու խաղահրապարակի հատվածի շինարարական աշխատանքները եւ խաղահրապարակում երեխաների համար նախատեսված կարուսելների ձեռքբերումն ու տեղադրումը:

2015 թ-ի հուլիսի 14-ին Խաղահրապարակի աշխատանքներում ներգրավվեցին ԱՄՆ-ից ժամանած ավելի քան 20 կամավորներ, որոնք ամբողջ օրվա ընթացքում իրականացրեցին շինարարական աշխատանքները:

Հույս ունենք, որ այս նախաձեռնությունը խթան կհանդիսանա այգու մյուս հատվածների իրագործման համար:

Հետագա անելիքները

Ունենալով աջակցություն, մենք կկարողանանք խթանել այգու ամբողջական նախագծի իրականացմանը: Նաև հնարավորություն կունենանք ապահովել ջրամատակարարման և էլեկտրոէներգիայի ենթակառուցվածքները, ձեռք բերել ծառեր ու ծաղիկներ, ինչպես նաև ապահովել քայլուղիներն ու դրանց լուսավորվածությունը, կառուցել փակ տարածքներ՝ տարվա բոլոր եղանակներին նախատեսված բազմաբնույթ իրադարձությունների իրականացման համար: Հնարավորություն կունենանք թաղամասի բնակիչների համար կազմակերպել այգու ձեւավորման մրցույթներ, որոնք ուղղված կլինեն նստարանների նախագծմանը և աղբամանների պատրաստմանը:

Մենք կկարողանանք ստեղծել անվտանգ և առողջ ապրելակերպը խթանող բացօթյա խաղահրապարակ՝ նախատեսված բոլոր տարիքային խմբերի ու կարողություններ ունեցող մարդկանց համար: Կկարողանանք նաև կառուցել ամֆիթատրոն, որտեղ մարդիկ կկարողանան համերգներ կամ տարբեր թեմաներով քննարկումներ ու ելույթներ ունկնդրել:

[2] http://www.paros-foundation.org/projects.html#.Va3nYKTtlHw